ՀԱՆԳԻՍՏ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԳԵՈՐԳ ՔԱՀԱՆԱ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ



Երկարատև հիվանդությունից հետո, 1954 թվականի հունվարի 21-ին, վախճանվեց արժանապատիվ Տ. Գեորգ քահանա Մելքոնյանը։

Հանգուցյալը ծնվել է 1878 թվականի օգոստոսի 18-ին Տրապիզոնի վիլայեթի Զարշամբայի գավառի Էրենջյուկ գյուղում հացագործի ընտանիքում։ Նրա ծնողները գաղթել են Ռուսաստան և բնակվել Գորյաչի Կըլյուչի Սադովա գյուղում։ Հանգուցյալը իր նախակրթությունը ստանալով տեղի տարրական դպրոցում, ինքնուրույն ջանասիրությամբ լրացնում է իր ուսման պակասը և նույն գյուղում նշանակվում ուսուցիչ։ Միաժամանակ նա դպրություն է անում տեղի եկեղեցում։ 1916 թվականին քահանա է ձեռնադրվում Մխիթար եպիսկոպոսի ձեռքով և քահանայագործում Աստրախանի Ս. Պետրոս եկեղեցում։

1925 թվականին տեղափոխվում է Կրասնոդարի Աուլ չերքեզահայերի գյուղը և հովվում այնտեղ շուրջ 5 տարի։ Կրասնոդարի եկեղեցին վերանորոգելու համար նա հանդանակություն է կազմակերպում՝ զգալի մի գումար դնելով իր անձնական միջոցներից։

Նորին Ս. Օծություն հանգուցյալ Գեորգ Ե. Կաթողիկոսի կարգադրությամբ, 1926 թվականին Լենինական քաղաքի երկրաշարժի պատճառով վնասված եկեղեցիները վերանորոգելու համար նա հանգանակություն է կազմակերպում և գոյացած գումարն ուղարկում Էջմիածին։

Գեորգ քահանայի հանրօգուտ այդ գործունեությունը արժանանում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ուշադրությանը. Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակով նա ստանում է լանջախաչ կրելու իրավունք։ 1943 թվականից հանգուցյալը քահանայագործում էր Բելորեչինսկում և միաժամանակ հովվում Մայկոպ քաղաքի հավատացյալ համայնքին և նրա շրջակայքին։

Իր 38-ամյա քահանայագործության շրջանում, Տ. Գեորգն իր անբասիր վարք ու բարքով, իր անձնվիրությամբ և մեղվաջան աշխատանքով մի՛շտ էլ սիրված է եղել իր հավատացյալ ժողովրդի կողմից։ Արժանավոր հովվի մահը խորապես վշտացրեց իր ժողովրդին։

Հանգուցյալ արժանապատիվ Տ. Գեորգ քահանայի հուղարկավորությանը եկել էին մասնակցելու նրան հարգող հազարավոր հավատացյալներ։ Թաղումը կատարվեց պատշաճ հանդիսությամբ։ Տան կարգն ու լվացումը կատարելուց հետո, Գրիգոր քահանա Անանյանը խոսեց դամբանական՝ դրվատելով հանգուցյալի արժանիքները։ Ապա սգակիրների և հանգուցյալի հիշատակը հարգողների ուղեկցությամբ, դագաղը առաջնորդվեց Բելորեչինսկու հանգստարանը, ուր հանգուցյալի մարմինը հանձնվեց հողին։

Աստրախանի, Կրասնոդարի և Բելորեչինսկու հավատացյալները երախտագիտությամբ կպահեն իրենց սրտերում բարի և ազնիվ հովվի հիշատակը։